

Բարկեն Սիրականի որդին Աշոտ, որ լի համարձակութեամբ՝ մանաւանդ թէ յանդգնութեամբ ներս մտաւ սենեակէն, երբ այդ սենեկը հագուած ծանր եւ վսեմ կնոջ կերպարանքը տեսաւ, որու գեղեցիկ, տխուր, հանդարտ եւ քննիչ աչքերը իր վրայ կիյնային եւ իբրեւ թէ իւր միտքը, դիտաւորութիւնը, իւր կեղծ պաշտօնն եւ անունը արդէն գուշակած էին, շփոթեցաւ, հագիւ թէ ձեռքը կուրծքին գրաւ, եւ լեզուն անշարժ մնաց, եւ դռան քով կանգ առաւ: Իսկ Վասկանուշ միշտ անխռով:

— Բարի է, իշխան, գալուստդ այս մեր կողմերը, լսեցի քու երթը թագաւորական բաղաքը, փափագեցայ տեսնելու, վասնզի ես էլ բարեկամներ ունիմ եւ թերեւս օգտակար կարենամ լինիլ, վասնզի Սպարապետը ինձ էլ օտար չէ, մանաւանդ թէ շատ մօտիկ ազգական է: Ինչպէ՞ս է, ի՞նչ վիճակի մէջ է, զարմանք, որ այս կողմերէ անցնելով ինձ նամակ մը չէ տուեր:

Այս խօսքերը թեպէտ իբրեւ շատ պարզութեամբ գրուցուած, այնպիսի ձեւ մը ունէին եւ այնպիսի եղանակ իւրաքանչիւր բառի վրայ ծանր-ծանր շեշտուելով, որ Աշոտ բոլորովին շփոթեցաւ եւ թրթովելով այսչափ միայն կրցաւ պատասխանել:

— Կը ներէք, իշխանուհի, ես նաեւ չէի գիտեր թէ ի՞նչ ճամփայ պիտի բռնեմ իմ ճամփորդութեանս նպատակին հասնելու համար, եւ ինձ այնպէս հրաման կայ, որ առանց դանդաղելու ուղեւորիմ:

— Լաւ՛, բայց միւս հարցմունքներու չես պատասխաներ, իշխան, Սպարապետին վիճակը հարցուցի:

Լռութիւն մը տիրեց դարձեալ, իբրեւ թէ աշակերտ մը վարժապետին առջեւ անպատասխանի մնացած չէր գիտեր թէ ի՞նչ զրուցեր եւ չէր համարձակեր գլուխը նաեւ վեր վերցնել: Բայց վերջապէս իւր բոլոր զօրութիւնը ժողովելով եւ ինչպէս երկչոտներու սովորութիւնն է՝ անհամարձակութիւնը յանդգնութեան տանելով՝ գլուխը վեր առաւ: